ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 22

«15» 04 2022 թ. ք. Երևան

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԴԱՏԱԽԱԶ ԴԱՎԻԹ ՎԵՔԻԼՅԱՆԻՆ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՎԱԳ ԴԱՏԱԽԱԶԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովի 2022 թվականի ապրիլի 14-ի որոշումը և ՀՀ գլխավոր դատախազի՝ Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազ Դավիթ Վեքիլյանի նկատմամբ կարգապահական տույժ նշանակելու մասին 2022 թվականի ապրիլի 15-ի որոշումը և ղեկավարվելով «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 5-րդ կետերով, 54-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 60-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստի վարչական շրջանի դատախազ Դավիթ Վեքիլյանին փոխադրել և նշանակել ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության ավագ դատախազի պաշտոնում:
2. Հաշվի առնելով վարչական շրջանի դատախազության դատախազների կողմից դատախազական գործառույթների ամենօրյա պատշաճ իրականացման հարցում վարչական շրջանի դատախազի՝ որպես վերադաս դատախազի պաշտոնի առանցքային նշանակությունը՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո ենթակա է անհապաղ կատարման՝ ելնելով վարչական շրջանի դատախազության աշխատանքների բնականոն կազմակերպումն ապահովելու հանրային շահերից:

Արդարադատության երկրորդ դասի պետական խորհրդական